

քի կամ շատ, կանուխ կամ ուշներ. գործութիւնն պիտի ընէ . այս տարբերութիւնն ուլ կը պատահի նիւթին զանազանութենէն. այսինքն տկար կամ չօշաւոր լնելէն. հարուածն սկսուած ժամանակին, այսինքն կանուխ կամ ուշ կսելէն, յաճախելէն, տեւողութենէն և այլն: Ահա դուք ալ ճիշդ պատիւ էք . ձեր կիրքերն ու մոլութիւնները եթէ ձեզմէ ունաց վերաց շուտով երեւելի ներգործութիւն ըստներ, պատճառն այն է, որ նախ նոցա կազմը բնութեամբ ամուր և կատարեալ առողջ կը լնի. երկրորդ՝ իրենց կիրքերը բարեբազզութեամբ և բարերար պատճառով մի ուշ արթնցած և գործադրուած կը լինին և յաճախած չեն լինիր . Երրորդ՝ չեն յարատեւեր. այլ շուտով կը զգան և ետ կը կենան: Այս առիթները, այս կարողեն վնաս ներն անսեսանելի ընել, բայց վնասն խորառ արդիվել չեն կարող . ուստի բնաւ պիտի չեն վնասակիլ:

(Ըստ Առաքելով Բիթուան)

ԽՕՍՔ ԶԲՀԱՍԿԱՑՈՂՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ԳՈՐԾ ԶՈՒՆԻՄՔ

Արշալուս իւր 975 թուով գործետլ Սիօնի գեմ յարձակած էք իրեն բնական լիքուաւ և թշնամական ու գործլ: Նոյնպէս Հայրենիք 176 թուոյն մեջ արկաւառութենէ լուծուած կարապետ Տ. Մինասեանը նամակ մի հրատարակած էք իրը ՚ի պատասխանի Սիօնի հերքման: Սիօն՝ թէ Արշալուս և թէ Հայրենիքի հրատարակած թեանց մեջ հակառակութեան ցած սպի մը նշմարելով՝ ըսողեր պատասխանել և իւր էջերը անօդուար բանակառութիւններ: Սիօն բառական կը համարի

յայտնել, որ չունի իրենց հակառականութեան կիրքը և չը սնուցանելու յինքն ատելութեն և խոռվասիրութեն ոգի, որ ամեն ողջամասց զգուանիք կ'առթէ և ոչ այլ ինչ. այլ Սիօնի նշանաբանն է ԽԱՆԱԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ և ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ: Բայց որովհետեւ Արշալուս մասնաւոր նպատակաւ կը չունայ Երաւաղեմայ Միաբանութիւնը Եղմիածնայ Մայր Ամեռուցն և Նորա Գահակալ ամենայն Հայոց Վեհ. Կութաղիկոսին հետ թշնամացնել, այս մասին հօրի կը համարինք հետեւեալ պաշտօնական ազդք հրատարակել:

ՊԱՇՕՆԱԿԱՆ ԱԶԴՔ

Ա.

Արմել Ս. Եղմիածնի Մայր Ամեռուցն իրաւունքն ու պատիւը ամեն կերպիւ պաշտպաներ է ցարդ և կը պաշտպանէ միշտ. քանզի Միաբանութիւնը լաւ գիտէ, որ Մայր Ամեռուց իրաւունքը, Հայաստանեայց Եկեղեցւոց իրաւունքն է և Հայաստանեայց Եկեղեցւոց իրաւունքը Ազգի կեանքն է . հետեւուրոք ինչպէս որ արժան է կեանքը պահպաննել, նոյնպէս կը պահպանէ Մայր Ամեռուց իրաւունքը . այս պիտի ալ նորա Վեհափառ Գահակալ լին հետ երբեք թշնամութիւն չունի, և եթէ ինչ ինչ գործոց մասին անհամացյանութիւն լինի, այն եւս թշնամութիւն չէ:

Աւատի Արշալուսը այս մասին բոլոր միան կը սիսալի . երբ երկու Ամսուոց մեջ թշնամութիւն կ'երազէ . վասն ուրց կը յարդ օրենքը զի՞քը, որ այս տեսակ հրատարակական թշնամութեամբ երկու Ամսուոց մեջ որամ ցանելու չափ խառապի առաջարարը ըսրատաւորէ :

Ժամանակէ մը ՚ի վեր ցաւօք կը տեսնուի որ Եկեղեցականաց տեղափոխութեան մասին Ա. Եկեղեցւոց սահմանը եղծման ենթակայ լինելուն՝ ՚ի գոյթակղութիւն ժողովրդեան ցաւալի գէաբէեր կը պատահին երբեմն, Եկեղեցականներու տեղէ տեղ գնացած ժամանակ տեղւոյն Եկեղեցական իշխանութեան կողմանէ վիսյական ըլպահանջուելով, ոչ դամիչի բարուք Եկեղեցականներ մի տեղ ասպօթինի շարժելով՝ մի ուրիշ տեղ երթալու դիւրութիւններ կ'ունենան, և երբեմն երթեմն խարեւոյ անձինք իրր Եկեղեցական կը ներկայացնեն զերենք. ինչպէս հետեւեալ վարքագրութենէն կ'երեւի:

Քիլացի Գրիգոր Ստեփաննեան անուն անձը՝ ՚ի ծնէ Պատական, Լիբանանու վանքը կրթութիւն առած, 20 տարեկան հասակին մօա իրբե Հայ Քիլա գնացած, անտի Կիլիկիա և ըստ իւր ասութեան հանդուցեալ Կիրակոս Կաթողիկոսէն ուրար առած, անտի ալ Կեսարիա երթալով, Թէվէքելլեան Միրաչի դատեր հետ ամուսնացած. Ժամանակ մը կենալէ յետոյ Սեբաստիոյ վրայով Եւգոկիա գնացած և ըստ իւր ասութեան նոյն տեղի Առաջնորդ Կեսարացի Յակովը եպիսկոպոսէն վարդապետ ձեռնադրուած՝ Յարութիւն անուամբ: Ա. յնուհետեւ երբեմն բռ զորական քարոզիչ և երբեմն Պատական վորդապետ և այս վերջին ժամանակներն Անթարիոյ գեւզը իրրեւ Հույց վարդապետ թափառելէ յետոյ, Ա. Ամոռա եկաւ: Իրեն ձեռքի թըլթերը նոցելով՝ թէ և իրբեւ վարդապետ նկատուեցաւ, բայց կասկածելի լինելուն, մանաւանդ միսյական ալ չունենալով, ստիսուեցանք քննութիւննել միամնդամայն Կիլիկիոյ Վեհ, Մը

կըստիչ Կաթողիկոսին և Կեսարիա ու Եւգոկիա գրեցինք: Կիլիկիոյ Վեհ Կաթողիկոսը տեղեկութիւն տալով, որ այս մարդը վարդապետ եղած, ամուսնացած, վերջին ամուսինը թողած խարեւոց մ'է, և մանաւանդ քննութեան մէջ ինքն ալ խատովանելով Կեսարիա ամուսնանալը և վարդապետութեան վաւերական ըըլլով, վեղար, փիլոն և ինչ որ քաղլը կը դանուէր Ա. Եկեղեցւոց վերաբերեալ, առնելով ինչպէս արդէն էր, լոկ աշխարհական արձակեցինք Գրիգոր անուամբ, և որովհետեւ խնդրեց վերասին իւր կնոջ քաղլ երթալով՝ ՚ի Կեսարիա, թողարքուեցաւ գնալ անդ:

Ահա իւր գիմաց նկարագրութիւնն ալ, հասակը միջակ և բարակ, գլուխը հաւկրթածեւ և երկայն, մաղերը շագանակագոյն. դէմքը վախտ և թխուրակ, ճակատը ցած, աչքերը խած, քիթը ուղղաձիգ, սուր և միջակ մեծութեամբ, մօրուոր շիկագոյն, սակաւ ինչ ցանցաւ և կարճ, պեխը կարճ և մահիածեւ, չըթաւնքը կախ, մանաւանդ վարի շրթաւնքը, բերանը միջակ մեծութեամբ, ակւանները երկայն, որը խօսելու ատեն՝ գուրս կը ցցուին, կը զակը սուր, սւսերը նեղ և փաքք ինչ վերամբարձ, խօսակցութեանը մէջ թրւատ և արտգախօս, ճայնը փաքք ինչ խնդրուեկ:

Ա. յո տեղեկութիւններն տալով կը դդուշոյնեմք մեր համայն սիրելի Աղքայինքը սյասիսի խարեւոց անձինքներէ, որք դժբաղդաբար յաճախ կը տեսնուին վերջին ժամանակներուս մէջ՝ ՚ի գոյթակղութիւն պարզամտաց և ՚ի նախատախնա քրիստոնէութեան:

՚ի Գիւնագուն: